Նար-Դոս

Վարդ

Փոքրիկ թուփի վրա
Ես մի վարդ տեսա,
Բայց որքա՜ն սիրուն...
Իմ տկար լեզուն
Պատմել չի կարող
Նրա գեղն ապշեցնող:
Իսկ նորա հո՞տը...
Ո՞վ նորա մոտը
Կանգնած լինելով,
Կարեր անվրդով
Մի րոպե մընալ
Եվ ուշից չգընալ:
Ես ինձ կորցրած՝
Մոտեցա կամաց
Կախարդիչ թուփին,
Եվ ձեռքս վարդին
Իսկույն մեկնեցի
Ու շուտ պոկեցի:

Ես սաստիկ անհագ
Հոտ էի առնում
Վարդեն անդադրում...
Եվ երբ հագիվ ես

Մի կերպ վերջապես
Հագեցա արդեն
Կախարդիչ վարդեն,
Հայնժամ ի՞նչ տեսնեմ.
Ես ձեզ ո՞նց պատմեմ,
Մատներս բոլոր
Խիստ արենկոկոլ
Այնպե՛ս'ին ցավում,
Այնպե՛ս մխկտում,
Որ ես կատաղած՝
Վարդը անիծած
Շուտ դեն ձգեցի:
Եվ անիծեցի
Ինքս ինձ սաստիկ,
Որ կեղծ, խաբուսիկ